

# ՅԵՆԿԻ ՏՈՒՏՈՒՉԸ

Ջեյմս Հյուբեր (*James Huber*)

*Այս առավուտ դուռն թակեցին: Երբ բացեցի տեսա ինամբով եւ դուրեկան հազնված մի գույգ: Առաջինը խոսեց տղամարդը. «Ողջո՛ւյն: Ես Ջոնն եմ, իսկ սա՝ Մերին է»:*

**Մերի.** «Ողջո՛ւյն: Մենք այստեղ ենք, հրավիրելու համար ձեզ մեզ հետ միասին համբուրել Յենկի տուտուզը»:

**Ես.** «Ներեցե՞ք: Այդ ի՞նչ էք խոսում: Ո՞վ է Յենկը, եւ ինչո՞ւ ես պիտի համբուրեմ նրա տուտուզը»:

**Ջոն.** «Եթե դուք համբուրեք Յենկի տուտուզը, նա ձեզ կտա միլիոն դոլար. իսկ եթե հրաժարվեք, նա թափ կտա ձեր միջից ողջ կեղտը»:

**Ես.** «Ի՞նչ: Դա դրամաշորթության ինչ-որ նոր տարօրինակ եղանակ է»:

**Ջոն.** «Յենկը միլիարդատեր-մարդասեր է: Յենկը կառուցել է այս քաղաքը: Յենկն այս քաղաքի տերն է: Նա կարող է անել, ինչ որ ցանկանա, եւ նա ցանկանում է տալ ձեզ միլիոն դոլար, սակայն չի կարող, քանի դեռ դուք չեք համբուրել նրա տուտուզը»:

**Ես.** «Ես ոչինչ չեմ հասկանում: Ինչո՞ւ...»

**Մերի.** «Դուք ո՞վ եք, կասկածի տակ ամնելու համար Յենկի պարգեւը: Դուք ի՞նչ է, չե՞ք ուզում միլիոն դոլար: Մի՞թե դա չարժե մի փոքրիկ համբույր նրա տուտուզին»:

**Ես.** «Դե...եթե դա օրինական է, բայց...»

**Ջոն.** «Ուրեմն զնանք. միասին համբուրենք Յենկի տուտուզը»:

**Ես.** «Իսկ դուք հաճա՞խ եք համբուրում Յենկի տուտուզը»:

**Մերի.** «Օ՛, միշտ...»

**Ես.** «Եւ Յենկը տվե՞լ է ձեզ միլիոն դոլար»:

**Ջոն.** «Դե... ոչ: Իրականում ոչ ոք փող չի ստանում, քանի դեռ չի հեռացել քաղաքից»:

**Ես.** «Այդ դեպքում ինչո՞ւ դուք չեք հեռանում քաղաքից հենց հիմա»:

**Մերի.** «Դուք չեք կարող հեռանալ, քանի դեռ Յենկը չի ասել, այլապես դուք չեք ստանա փող եւ նա թափ կտա ձեր միջից ողջ կեղտը»:

**Ես.** «Դուք գիտե՞ք որեւէ մեկին, ով համբուրել է Յենկի տուտուզը, լքել է քաղաքը եւ ստացել է միլիոն դոլար»:

**Ջոն.** «Իմ մայրը տարիներ շարունակ համբուրել է Յենկի տուտուզը: Նա հեռացավ քաղաքից անցած տարի եւ ես վստահ եմ, որ նա ստացել է փողը»:

**Ես.** «Դրանից հետո դուք նրա հետ չե՞ք խոսել»:

**Ջոն.** «Ոչ իհարկե. Յենկը թույլ չի տալիս»:

**Ես.** «Այդ դեպքում ինչո՞ւ եք կարծում, որ նա իրոք ձեզ փող կտա, եթե դուք չեք խոսել որեւէ մեկի հետ, ով իրոք փող ստացել է»:

**Մերի.** «Դե, նա տալիս է ձեզ միթիչ՝ հեռանալուց առաջ: Գուցե կբարձրացնեն ձեր պաշտոնը, գուցե՝ վիճակադադով կշահեք, կամ, վերջապես, փողոցում մի քսանդոլարանոց կգտնեք»:

**Ես.** «Իսկ ի՞նչ գործ ունի այստեղ Յենկը»:

**Ջոն.** «Յենկը կապեր ունի»:

**Ես.** «Ներեցե՞ք, բայց սա ինչ-որ տարօրինակ խարդախություն է»:

**Ջոն.** «Բայց խոսքը միլիոն դոլարի մասին է: Չե՞ք ուզում իրոք փորձել: Եւ հիշեք, որ եթե դուք չհամբուրեք Յենկի տուտուզը նա թափ կտա ձեր միջից ողջ կեղտը»:

**Ես.** «Գուցե, եթե ես տեսնեի Յենկին, խոսեի իր հետ, իմանալի մանրամասներն անմիջապես իրենից...»

**Մերի.** «Ոչ ոք չի կարող տեսնել Յենկին, ոչ ոք չի կարող խոսել Յենկի հետ»:

**Ես.** «Այդ դեպքում ինչպե՞ս եք դուք համբուրում նրա տուտուզը»:

**Ջոն.** «Երբեմն մենք պարզապես ուղարկում ենք իրեն օդային համբույր՝ մտածելով նրա տուտուզի մասին: Կամ էլ համբուրում ենք Կարլի տուտուզը, իսկ նա փոխանցում է համբույրը Յենկին»:

**Ես.** «Ո՞վ է Կարլը»:

**Մերի.** «Մեր ընկերը: Այո՛, նա է, որ սովորեցրել է մեզ Յենկի տուտուզը համբուրելու հետ կապված ամեն ինչ»:

**Ես.** «Եւ դուք հավատացել եք նրա խոսքին, երբ նա ասել է, թե գոյություն ունի Յենկը, որն ուզում է, որ դուք համբուրեք նրա տուտուզը, եւ որ Յենկը ձեզ կպարգեւատրի դրա համար»:

**Ջոն.** «Օ՛ր ոչ: Շատ տարիներ առաջ Կարլը ստացել է Յենկից նամակ, ուր ամեն ինչ բացատրված է: Ահա պատճենը. նաեք ինքներդ»:

*\*\* Կարլի աշխատասեղանից \*\**

**Համբուրեք Յենկի տուտուզը եւ նա կտա ձեզ միլիոն դոլար, երբ դուք հեռանաք քաղաքից:**

**Մի չարաշահեք ոգելից խմիչքները:**

**Թափ տվեք բոլորի միջից իրենց ողջ կեղտը, եթե իրենք ձեզ նման չեն:**

**Ճիշտ սևվեք:**

**Յենկն անձամբ է թելադրել սույն ցուցակը:**

**Լուսինը պատրաստված է կանաչ պանրից:**

**Յենկի յուրաքանչյուր ասածը ճիշտ է:**

**Լվացեք ձեռքերը՝ զուգարանից հետո:**

**Մի՛ գործածեք ոգելից խմիչքներ:**

**Կերեք ապխտած նրբերշիկները միայն չամչաբլիթներով, առանց համեմունքների:**

**Համբուրեք Յենկի տուտուզը, կամ թե չէ նա թափ կտա ձեր միջից ողջ կեղտը:**

**Ես.** «Երեւում է, որ սա գրված է Կարլի ձեւաթղթի վրա»:

**Մերի.** «Յենկը չուներ որեւէ թուղթ»:

**Ես.** «Ես զգում եմ, որ եթե ստուգենք կպարզվի, որ սա Կարլի ձեռագիրն է»:

**Ջոն.** «Իհարկե, Յենկը թելադրել է սա»:

**Ես.** «Բայց դուք ասացիք, որ ոչ ոք Յենկին չի տեսել»:

**Մերի.** «Ոչ հիմա, բայց տարիներ առաջ նա խոսել է որոշ մարդկանց հետ»:

**Ես.** «Դուք ասացիք, որ նա մարդասեր է: Այո՛, որ մարդասերը կարող է կեղտ թափ տալ մարդականց միջից սոսկ որորից հետո իրենք այլ են»:

**Մերի.** «Այդպես է ուզում Յենկը, իսկ Յենկը միշտ ճիշտ է»:

**Ես.** «Այո՛ որտեղի՞ց որոշեցիք»:

**Մերի.** «Յորթերորդ կետում ասված է. «Յենկի յուրաքանչյուր ասածը ճիշտ է»: Ինձ համար այսքանը բավական է:

**Ես.** «Բայց գուցե ձեր ընկերը, Կարլը, պարզապես հորիսել է այս ամենը»:

**Ջոն.** «Ոչ մի դեպքում: Կետ հինգերորդը պնդում է, «Յենկն անձամբ է թելադրել սույն ցուցակը»: Դրանից բացի երկրորդ կետում ասված է «Մի չարաշահեք ոգելից խմիչքները», չորրորդում՝ «Ճիշտ սևվեք», իսկ ութերորդում՝ «Լվացեք ձեռքերը՝ զուգարանից հետո»: Յուրաքանչյուրը գիտի, որ այս բաները ճիշտ են, ուրեմն մնացածը նույնպես ճիշտ է»:

**Ես.** «Բայց իններորդ կետում ասված է. «Մի՛ գործածեք ոգելից խմիչքներ», ինչը հակասում է երկրորդ կետին: Իսկ վեցերորդ կետում ասված է «Լուսինը պատրաստված է կանաչ պանրից», ինչը պարզապես ճիշտ չէ»:

**Ջոն.** «Իններորդ եւ երկրորդ կետերի միջեւ հակասություն չկա. պարզապես իններորդը պարզաբանում է երկրորդը»: Ինչ վերաբերում է վեցերորդին, ապա դուք երբեք չեք եղել Լուսնի վրա, այնպես որ չեք կարող համոզված դա պնդել»:

**Ես.** «Գիտնականները բավական ճշգրտորեն հաստատել են, որ Լուսինը քարից է...»

**Մերի.** «Բայց նրանք չգիտեն, թե երկրից է այդ քարը, թե՞ տիեզերքից, ուստի եւ այն հեշտությամբ կարող է կանաչ պանիր լինել»:

**Ես.** «Ես իհարկե փորձագետ չեմ, սակայն կարծում եմ, որ Լուսնի գոյացման երկրային վարկածը հերքված է: Վերջապես, քարի ծագման մասին տեղեկությունների բացակայությունը այն դեռ պանիր չի դարձնում»:

**Ջոն.** «Ա՛յ, տեսնո՞ւմ եք. դուք ընդունեցիք, որ գիտնականները սխալական են, բայց մենք գիտենք, որ Յենկը միշտ իրավացի է»:

**Ես.** «Արդյո՞ք գիտենք»:

**Մերի.** «Իհարկե, չե՞ որ դա է պնդում հինգերորդ կետը»:

**Ես.** «Այսինքն դուք պնդում եք, որ Յենկը միշտ ճիշտ է, քանի որ այդպես է ասված ցուցակում, ցուցակը ճիշտ է, քանի որ Յենկն է թելադրել այն, եւ մենք գիտենք, որ այն թելադրել է Յենկը, որովհետեւ ցուցակում այդպես է ասված: Բայց սա արատավոր շրջան է: Միեւնույն է թե ասես. «Յենկն իրավացի է, քանի որ Նա ասում է, որ Ինքն իրավացի է»:

**Ջոն.** «Այժմ դուք սկսում եք ընմբռնել դա: Որքան դուրեկան է, երբ որեւէ մեկը սկսում է հասկանալ Յենկի ձեռով մտածելու եղանակը»:

**Ես.** «Բայց... օ՛հ, լավ, ոչինչ: Ի՞նչ էր ասված ապիտած նրբերշիկների հաշվով»:

**Մերի.** (Շիկնում է):

**Ջոն.** «Նրբերշիկները՝ չամչաբլիթներով, առանց համեմունքների: Դա է Յենկի ուղին: Որեւէ այլ եղանակները սխալ են»:

**Ես.** «Իսկ եթե ես չունենամ չամչաբլիթ»:

**Ջոն.** «Չկա չամչաբլիթ՝ չկա նրբերշիկ: Նրբերշիկն առանց չամչաբլիթի՝ սխալ է»:

**Ես.** «Եւ ո՛չ մի խավա՞րտ, ո՛չ մի մանասե՞խ»:

**Մերի.** (Ցնցված տեսք ունի):

**Ջոն** (Ճշում է). «Այդպես մի՛ արտահայտվեք: Բոլոր տեսակի համեմունքները՝ վատ է»:

**Ես.** «Ուրեմն թթու դրած կաղամբով մանր կտրատված երշիկների մասին խո՞սք էլ չի կարող լինել»:

**Մերի.** (Մատներով փակում է ականջները). «Ես դա չեմ լսում. Լա լա լա, լա լա, լա լա լա»:

**Ջոն.** «Դա զգվելի է: Միայն հրեշավոր այլասերված մեկը կարող է նման բան ուտել...»

**Ես.** «Բայց դա համե՞ղ է: Ես միշտ եմ դա ուտում»:

**Մերի.** (Ուշագնաց է լինում):

**Ջոն** (Բռնելով նրան). «Է՛հ, եթե ես իմանայի, որ դու դրանցից մեկն ես, ես այսքան ժամանակ չեի կորցնի: Երբ Յենկը թափ տա քո միջի կեղտը ես այդտեղ կլինեմ, կհաշվեմ փողերը եւ կծիծաղեմ: Ես կհամբուրեմ Յենկի տուտուզը քո փոխարեն, դու՝ անչամչաբլիթ երշիկակտրատված թթվակաղամբակեր»:

Այսելով դա Ջոնը ներթաշեց Մերիին մեքենայի մեջ եւ հեռացավ: